1. Տաշիր

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16-2»

ք. Տաշիր «07» Հուլիսի 2023թ.

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է «ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի» կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Քոչարյանի, որը գործում է «ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

**4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.12 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու**

ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | «ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ |
| ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94 | ք. Վանաձոր, Տարոն 4, Բելոռուսների 10/4 |
| ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն | Ինեկոբանկ, Վանաձոր մ/ճ |
| Հ/Հ 900272423014 | Հ/Հ 2050222074971001 |
| ՀՎՀՀ 06966995 | ՀՎՀՀ 06943674 |
| ------------------------------Է. Արշակյան | ------------------------------Ն. Քոչարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«07» Տարեթի 2023թ. կնքված*
*N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16-2»*
*ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 2 | 71241200/502 | Տաշիր համայնքի Տաշիր, Սարատովկա և Պետրովկա բնակավայրերում սպորտային և մանկական խաղահրապարակների և Տաշիր բնակավայրում հավերժության պուրակի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ **Տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև** | դրամ | 1000000 | 1000000 | 1 | | Պայմանագրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրի ուժի մեջ մտնելու օրվանից :*

| | |
|---|---|
| ***Չափաբաժին 2*** | **Տաշիր համայնքի Տաշիր, Սարատովկա և Պետրովկա բնակավայրերում սպորտային և մանկական խաղահրապարակների և Տաշիր բնակավայրում հավերժության պուրակի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ** |
| | 1. Ներկայացնել մանրամասն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ:<br>2. Կատարել տեղանքի հետազոտություն և տալ գեոդեզիական արդյունավետ լուծումներ, անհրաժեշտության դեպքում կատարել ինժեներաերկրաբանական հետազոտություն և տրամադրել եզրակացություն:<br>3. Ներկայացնել էսքիզային նախագիծ տարածական գունավոր պատկերներով, ճարտարապետական փոքր ձևերի հատուկ ներկայացմամբ:<br>4. Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, իրահանգներին, քաղաքաշինական նորմերին և պահանջներին:<br>5. Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն ընթեռնելի:<br>6. Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն փորձաքննությամբ, համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման<br>7. Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>8. Նախագիծը ներկայացնել 4 օրինակից /հայերեն և ռուսերեն/՝տպագիր և 1 օրինակից՝ էլեկտրոնային կրիչով (PDF ֆորմատով): Ծավալաթերթ-նախահաշիվը /հայերեն և ռուսերեն/ ներկայացնել նաև Excel ֆորմատով: |

9. նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքի ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:
10. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:
11. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները:
12. Գծագրային մասը ներկայացնել A-3 ֆորմատով՝

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝

ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացվում է պատվիրատուին հայերեն թղթային՝ 4 օրինակից և անհրաժեշտության դեպում նաև ռուսերեն թղթային՝ 1 օրինակից, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակներով,

ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը,

ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%):

Ծավալաթերթը ներկայացվում է հայերեն և ռուսերեն նաև Excel ֆորմատով տոկոսներով:

**Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ նախագծող կազմակերպության կողմից:**

**Կատարողը նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է ներկայացնի համապատասխան լիցենզիա ունեցող անձի (կազմակերպության) փորձաքննությանը և Պատվիրատուին նախագծանախահաշվային փաստաթղթերը տրամադրի փորձաքննված տարբերակով:**

**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները Պատվիրատուի կողմից ամբողջությամբ կընդունվի և դրա դիմաց վճարումները կիրականացվի փորձաքննության դրական եզրակացություն ստանալուց հետո:**

**Տվյալ չափաբաժնի մասով պայմանագրի կնքման փուլում ներկայացնել տվյալ ոլորտի համար օրենսդրությամբ պահանջվող արտոնագրերը կամ լիցենզիաները՝ համապատասխան ներդիրներով**

Նախատեսվում է կառուցել մանկական խաղահրապարակ Պետրովկա բնակավայրում, փոքր ֆուտբոլի հրապարակ Տաշիր և Սարատովկա բնակավայրերում, բացօթյա սպորտի հրապարակ և պատերազմի զոհերի հիշատակին նվիրված պուրակ Տաշիր բնակավայրում:

Նախատեսել Սարատովկա բնակավայրում 1 փոքր ֆուտբոլի խաղադաշտ 366 քմ տարածքով, տարածքի բարեկարգում, ցանկապատում, ռետինե կամ արհեստական խոտածածկով հատակների կառուցում, մինի ֆուտբոլի դարպասների և բասկետբոլի վահանների տեղադրում:

Նախատեսել Տաշիր բնակավայրում 1 բացօթյա մարզահրապարակ, տարածքի բարեկարգում, մեծահասակների համար մարզասարքերի տեղադրում:

| | |
|---|---|
| | Նախատեսել Տաշիր բնակավայրում 2 փոքր ֆուտբոլի հրապարակ Անի բ/գ-ում և Դրոցականներ թաղամասում, տարածքի բարեկարգում, ցանկապատում, ռետինե կամ արհեստական խոտածածկով հատակների կառուցում, մինի ֆուտբոլի դարպասների և բասկետբոլի վահանների տեղադրում:<br>Նախատեսել Պետրովկա բնակավայրում 1 մանկական խաղահրապարակ, տարածքի բարեկարգում, ցանկապատում, կանաչապատում, մանկական խաղասարքերի տեղադրում:<br>Նախատեսել Տաշիր բնակավայրում հավերժության պուրակի 366 քմ տարածքով կառուցում, տարածքի բարեկարգում, գեղարվեստական ձևավորում՝ հավերժության նշանի տեսքով, տարածքի կանաչապատում և լուսավորության համակարգի անցկացում: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272423014
ՀՎՀՀ 06966995

------------------------------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տարոն 4, Բեյռութցիների 10/4
ԻՆեկոբանկ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222074971001
ՀՎՀՀ 06943674

------------------------------Ն. Քոչարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Հավելված N 2**
**« 07 » Տարբեր 2023թ. կնքված**
**N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱԾՁԲ-23/16-2»**
**ծածկագրով պայմանագրի**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 71241200/502 | Տաշիր համայնքի Տաշիր, Սարատովկա և Պետրովկա բնակավայրերում սպորտային և մանկական խաղահրապարակների և Տաշիր բնակավայրում հավերժության պուրակի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան
ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900272423014
ՀՎՀՀ 06966995
---------------------Է. Արշակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տարոն 4, Բեյրուտների 10/4
ԻՆեկոբանկ, Վանաձոր մ/6
Հ/Հ 2050222074971001
ՀՎՀՀ 06943674
---------------------Ն. Քոչարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4.2
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(որակավորման ապահովում)

ք. Վանաձոր « 28 » փետրվարի 2023թ.**

«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Քոչարյանի /Նույն. քարտ 002776839, տրված 12.10.2015թ., 018/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում,

Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տարոն 4, Բեյրութցիների 10/4
ԻՆեկոբանկ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222074971001
ՀՎՀՀ 06943674

Տնօրեն Ն. Քոչարյան

Կ.Տ

28/փետրվարի/2023թ.

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1.

# ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն '«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ Ինեկոբանկ, Վանաձոր մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ 2050222074971001

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06943674

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն '**ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **06966995**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900008000698**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 225000 /երկու հարյուր քսանհինգ հազար/

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **Տուժանքի մասին համաձայնագիր (որակավորման ապահովում) «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16»**

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Աոդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

Հավելված 5.1

«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Վանաձոր

« 28 » փետրվարի 2023թ.**

«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Քոչարյանի /Նույն. քարտ 002776839, տրված 12.10.2015թ., 018/, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16*** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար: 1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Տարոն 4, Բեյրութցիների 10/4
ԻՆեկոբանկ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 2050222074971001
ՀՎՀՀ 06943674

Տնօրեն Ն. Քոչարյան

Կ.Տ

28/փետրվարի/2023թ.

| |
|---|
| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*** |
| 2. Թիվ |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն `«ՀԻԴՐՈԳԱԶՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ ԻՆեկոբանկ, Վանաձոր մ/ճ |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ 2050222074971001 |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ 06943674 |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան** |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ **06966995** |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900008000664** |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ 150000 /հարյուր հիսուն հազար/ |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ /AMD/ |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)* |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝<br>**Տուժանքի մասին համաձայնագիր (պայմանագրի ապահովում) «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-23/16»** |
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում> |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ |

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ.<br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ.<br>23.գ.Կատարման ամսաթիվը՝"___" ___ 20___թ. |